

Արմեն Ս. Ասրյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ.

Ծննդյան 130 և մահվան 90-ամյակի առիթով

Անհնար է պատկերացնել նոր ժամանակներում Հայոց անկախ պետականության վերականգնման փաստը, առանց վերիշելու և արժուորելու Արամ Մանուկյանի կյանքն ու գործը: Հայոց պատմության էջերում իրքի «Արամ Մանուկյան» հավերժացած ազգային և պետական գործիչը 1879թ. մարտի 19-ին Լեռնային Ղարաբաղի Շուշի մայրաքաղաքում ծնված Սարգիս Հովհաննիսյանն է<sup>1</sup>: Նա իր նախնական կրթությունը ստացել է Շուշի Ազգային թաղամասի ծխական դպրոցում, ապա 1895 թվականին դարձել է Շուշի նշանավոր թեմականի աշակերտը: Շուշին ազգային-հեղափոխական գաղափարների խմբում վայր էր, իսկ պատաճի Սարգիսը արդեն թեմական դպրոցում ուսանելու տարիներին այդ խմբումների ակտիվ մասնակիցն էր և իր կյանքը կապել էր ՀՅ Դաշնակցության հետ: Նա այստեղ նախաձեռնեց աշակերտական հավաքներ, մի քանի ընկերների հետ հրատարակեց «Կոկոն» անունով ձեռագիր թերթիկը: Հեղափոխական գաղափարներ տարածելու համար 1901թ. գարնանը Սարգիս Հովհաննիսյանը հեռացվեց Շուշի թեմականից, որից հետո ուսումը շարունակեց Երևանի թեմական դպրոցում՝ այն ավարտելով 1903թ.<sup>2</sup>: 1901 թվականից Սարգիս Հովհաննիսյանը ՀՅԴ Բարձրի կենտրոնական կոմիտեի տրամադրության տակ էր, իսկ 1903թ. ամռան երկրորդ կեսին անցնելով Կարս՝ մի կողմից գրաղվեց քարոզական աշխատանքներով, մյուս կողմից՝ ակտիվորեն մասնակցեց Սասուն ուղարկված գիմնաստար խմբերի կազմակերպմանը: 1903թ. սեպտեմբերին իր մասնակցությամբ ստեղծված Խանի և Ներուզի 150 հոգանոց խմբի հետ նա փորձում է անցնել Արևմտյան Հայաստան, սակայն հիվանդության պատճառով կես ճանապարհից հետ է վերադարձնում<sup>3</sup>:

Հայդուկային խմբերի կազմակերպած անցումների անհաջողությունից հետո Սարգիս Հովհաննիսյանը վճռեց անցնել Արևմտահայաստան և տեղում նպաստել ազատագրական շարժման ծավալմանը: 1905թ. փետրվարի 6-ին նա հաստատվեց

<sup>1</sup> Տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, «Լուսակից» հրատ., 2009 (Երրորդ հրատ.), էջ 14-15:

<sup>2</sup> Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 8, ց. 1, գ. 59, թ. 52:

<sup>3</sup> Տես «Հայրենիք», Բուստոն, 1922, N 1, էջ 30:

Վանում իբրև Արամ Մանուկյան<sup>4</sup>, իսկ կարծ ժամանակ անց՝ սկսեց առաջատար դեր խաղալ տեղի ՀՅԴ կազմակերպության մեջ: Վերահմաստավորելով ազատագրական պայքարի նախորդ փորձը՝ Արամ Մանուկյանը եռանդուն գործունեություն է ծավալում ընդհանուր ապստամբության նպատակով Վասպուրական գենք-զինամքերք փոխադրելով ուղղությամբ<sup>5</sup>:

1908թ. երիտրուքական հեղաշրջումից հետո Արամը կողմ արտահայտվեց խաղաղ ճանապարհով արևմտահայության դրույթան բարեկավմանը, սակայն երիտրուքերը նոր բափով շարունակեցին նախկին վարչակարգի հակահայկական, ազգայնամոլ քաղաքականությունը: Ու երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, Արամը բուրքական իշխանությունների հետ բանակցություններով ամեն կերպ փորձում էր Վանի հայությանը փրկել զրկանքներից ու ջարդերից: Սակայն, երբ խաղաղ միջոցներով այլևս անհնար դարձավ կանխել մեծամաշտար ջարդերը, Արամը, որպես ՀՅԴ ներկայացուցիչ, քաղաքական այլ ուժերի հետ ձեռնարկեց 1915թ. ապրիլյան ինքնապաշտպանության կազմակերպման գործը. «Մեր կացութիւնը յուսահատական էր այս ատեն, – նկատել է Արամը:– Հնտերելու մէկ բան միայն կը մնար մեզի համար. կամ անձնատուր ըլլալ և թողով որ խողխողեն մեզ իբր ոչխար, կամ մեռնի զէն ի ձեռին կոռուելով: Այս վերջինը նախընտրեցինք»<sup>6</sup>:

1915թ. ապրիլի 5-ին Արամ Մանուկյանի նախաձեռնությամբ ստեղծվեց Վանի Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմինը, որում նրա առաջարկով ընդգրկվեցին փորձառու զինվորականներ, դաշնակցականներ Բուլլարացի Գրիգորը, Կայծակ Առաքելը, սահմանադիր-ռամկավար Արմենակ Եկարյանը և ուրիշներ<sup>7</sup>: Որոշ ժամանակ անց նա ինքը նոյնպես մտավ այդ մարմնի մեջ<sup>8</sup> և դեկավարեց Վան-Այգեստանի ինքնապաշտպանությունը, որը սկսվեց 1915թ. ապրիլի 7-ին<sup>9</sup>:

Արամի գործուն մասնակցությամբ ստեղծվեցին Զինվորական մարմնին ենթակա մի շարք կառույցներ՝ Զինարաշխ մարմինը, Տեղեկատու դիվանը, զինագործարանը, հիվանդանոցը և այլն: Զինվորական մարմնի քարտուղար Օ. Միհրարյանի հավաստմամբ՝ «Զինվորական մարմնի և անոր յարակից օրգաններու, ինչպէս նաև Վանի հերոսամարտի ամբողջ բարոյական դեկավարությունը»<sup>10</sup> ընկել էր Արամի վրա:

Կովի առաջին օրը քուրքերը հումկու հրետակոծությունից հետո անցան լայնածավալ հարձակման, սակայն իր հեղինակության ու անձնական խիզախության շնորհիվ Արամ Մանուկյանը կարողացավ կասեցնել հակառակորդի մտադրությունների իրականացումը: Հայտնելով իրացանային և թնդանորային ուժգին կրակի տակ՝ նա առաջնորդին վայել իր պահվածքով (յուրաքանչյուրի հետ

<sup>4</sup> Դեմ այս ժամանակից է նա ընդունել Արամ Մանուկյան անուն-ազգանունը:

<sup>5</sup> Տես Խիբեր 3.3. Դաշնակցութեան պատմութեան համար, պատրաստեց և խմբագրեց Տասնապետամ Յ., հ. Գ, Բեյլութ, 1976, էջ 105:

<sup>6</sup> Լեփիսիս Յ., Գալումին տեղեկագիր տոքք. Եօհաննէս Լեփիսիսի: Դայաստանի ջարդերը, թարգմանեց՝ Ս. Շամսաննեան, Կ. Պոլիս, 1919, էջ 106:

<sup>7</sup> Տես Հերոսապատում Մեծ Երեսնի, Պեյրութ, 1978, էջ 59; Կամ-Կասպուրականի հերոսամարտը-75 (կազմ. Յ. Փափազյան). Երևան, 1990, էջ 22:

<sup>8</sup> Տես ՀԱԱ, ֆ. 1, գ. 74, թ. 39:

<sup>9</sup> Այգեստանից մեկուսացված Թալաքամեջը Վան քաղաքի երկրորդ մասը, նույնպէս դիմեց ինքնապաշտպանության և փրկվեց անխուսափել թվացող կոսորտածներից:

<sup>10</sup> Միհրարեան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 54:

առանձին գրուցում էր, համբուրում նրանց, գոտեպնդում և խորհուրդներ տալիս) քարձրացրեց զինվորների մարտական ողին<sup>11</sup>: Արամի, Զինվորական մարմնի անդամներ Ա. Եկարյանի, Քուլդարացի Գրիգորի և Կայծակ Առաքելի ղեկավարությամբ հայերը ոչ միայն հուսալիորեն պաշտպանվում էին, այլև արժանի հակահարված տալիս թշնամուն: Ապրիլի 8-ին և 9-ի լուս 10-ի գիշերը հայկական ուժերը, արիություն ու հնարամտություն ցուցաբերելով, գրավեցին քուրքական զորքերի մի շարք կարևոր հենակետեր:

Արամի գործունեությունը չէր ասհմանափակվում միայն Վան-Այգեստանով: Դեռևս ապրիլի 14-ին, ընդունելով քուրքերի դեմ մաքառող շատախցիների պատվիրակությունը, նա հրահանգեց Շատախի, Փեսանդաշտի և Քերծի մարտիկներին վարել բացառապես պաշտպանական մարտեր ու շարունակ լմել ժողովրդի հետ<sup>12</sup>: Ենելով քաղաքի պաշտպանների բարոյահոգեբանական, ռազմական ու պարենային կացությունը շծանքացնելու նկատառումներից՝ Արամն արգելեց Շուշանց-Վարագ գծում հավաքված 5.000 հայ փախստականների նահանջը Վաճ և Զինվորական մարմնի մյուս անդամների հետ քայլեր ձեռնարկեց նրանց պաշտպանության համար: Ապրիլի 14-ին Արամի հրահանգով այնուեղ ուղարկվեցին Այգեստանում ապաստանած 15.000 զարթականներից առանձնացված զինված զյուղացիները: Ձեռնարկված քայլերի շնորհիվ տեղի ազգաբնակչությունը մինչև ապրիլի 25-ը դիմադրեց թշնամուն և հետո միայն հարկադրաբար նահանջեց Այգեստան:

Թուրքական գորքերի հարձակումները Վաճի վրա կրկնվեցին բազմից, սակայն միշտ էլ հաջողությամբ ես մղվեցին: 1915թ. մայիսի 3-ին հայ ինքնապաշտպանները հետ մղեցին քուրքերի վերջին գրոհը: Զկարողանալով կոտրել վանեցիների հերոսական դիմադրությունը և տեղեկանալով ոռուսական բանակի առաջխաղացման մասին՝ կոսսակալը դադարեցրեց քաղաքի պաշարումը և նահանջեց Բիրիսի ուղղությամբ: Վաճի ինքնապաշտպանությունն ավարտվեց հաղթանակով, ինչի շնորհիվ ավելի քան 150 հազար վասպուրականցիներ փրկվեցին ամխուսափելի կոտորածներից:

1915թ. մայիսի 5-ին Արարատյան կամավորական զնդի հեծելազորը Դաշնակցական Խնեջոյի և Դալի Ղազարի հրամանատարությամբ մտավ Վաճ՝ արժանանալով ցնծագին ընդունելության: Նրանց դիմավորեց Արամը՝ ին օգնականների և քաղաքի բնակչության հետ<sup>13</sup>: Մայիսի 6-ին Վաճ հասան կամավորական զնդի հրամանատարներ Դրոն, Քեռին, Վարդանը, ապա ոռուսական բանակի «Բայազետ» զորախմբի հրամանատար զորավար Նիկոլաևը, որին էլ Արամը վանեցիների անունից հանձնեց քաղաքի բանայիները<sup>14</sup>:

1915թ. մայիսի 7-ին ոռուսական Կովկասյան բանակի հրամանատարության կողմից Արամ Մանուկյանը նշանակվեց Վաճի նահանգապետ: Այդ նշանակումը միանգամայն բնական էր, քանզի նրա հեղինակությունն ընդունում էին բոլոր՝ և հայ և օտար զործիները, նույնիսկ՝ թուրքերը: Արամի զիսավորությամբ Վասպուրականի հայությունը ձեռնամուխ եղավ հայրենի նահանգի վերաշինությանը: Զնավորվեցին նահանգի

<sup>11</sup> Տես նոյն տեղում, էջ 74-75:

<sup>12</sup> Տես նոյն տեղում, էջ 131:

<sup>13</sup> Տես ՀԱԱ, ֆ. 45, գ. 1, գ. 2, թ. 45:

<sup>14</sup> Տես նոյն տեղում, գ. 1, գ. 2, թ. 45, ֆ. 57, գ. 5, գ. 102, թ. 44, ֆ. 242, գ. 1, գ. 74, թ. 51:

վարչական կառույցներն ու կառավարման համակարգը: Ապագայի հանդեպ լավագույն հոլյուստը տողորոված ժողովուրդը վերականգնում էր ավերված օջախները, կառուցում նորերը, մշակում դաշտերն ու այգիները, վերաբացում արհեստանոցներն ու խանութները, փուերը, շուկան, աշխուժացնում առևտորն ու կրթական կյանքը: Հաջողություններն այնքան ակնհայտ էին, որ առանց շափազանցության կարող ենք կարճաժամ կյանք ունեցած Վանի նահանգապետությունն անվանել հայոց պետականության նախատիպ:

Սակայն Վանի հայկական նահանգապետությունը երկար կյանք չունեցավ, քանզի շուտով Կովկասյան քանակի 4-րդ կորպուսի գորամասերի ձեռնարկած՝ ռազմական տեսանկյունից չիմնավորված նահանջի հետևանքով Վան-Վասպուրականի հայությունը հովհան 18-ին հարկադրաբար քոնեց գաղթի ուղին: Արամը, հանդես բերելով ազգային-պետական մտածողություն, վճռականորեն դեմ էր արտահայտվում այդ աղետաբեր քայլին, սակայն գաղթի կասեցումը նրա և հայրենանվեր մյուս գործիչների ուժերից վեր էր:

Հարկադրաբար հեռանալով Վանից՝ Արամ Մանուկյանը մինչև 1917թ. դեկտեմբերը հաստատվեց Թիֆլիսում և ակտիվորեն մասնակցեց ազգային-քաղաքական կյանքին: 1917թ. վերջին ոտսական Կովկասյան ռազմաճակատի քայրայումը թուրքական ներխուժման վտանգի տակ դրեց ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանը: Այդ իրավիճակում՝ 1917թ. դեկտեմբերին, Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային և Հայ գինվորական խորհուրդների կողմից Արամն իրրև լիազոր գործուղվեց Երևանի նահանգ: Նրա խնդիրն էր վերջ տալ նահանգում տիրող խառնաշփորհին, ստեղծել ամուր իշխանություն և իրականացնել կազմակերպված գորահավաք: Դեկտեմբերի 18-ին ժամանելով Երևան՝ Արամ Մանուկյանը գերմարդկային ճիգեր գործարքեց հայությանը սպառնացող նոր ողբերգությունը կանխելու համար: Երևանի Հայոց ազգային խորհրդում ունեցած իր ելույթում, նկատի ունենալով թուրքական վտանգը, Արամը շեշտեց, որ հայությունը պեսը է հենվի միայն ու միայն իր ուժերի վրա. «Մենակ ենք և պէտք է ապավիճենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ երկրի ներար կարգ հաստատելու համար»<sup>15</sup>:

Արամի առաջարկությամբ ստեղծվեց Երևանի նահանգի իշխանության նոր մարմին՝ Հատուկ կոմիտե, որի նախագահ ընտրվեց ժողովրդի մեջ հարգանք վայելող Մ. Մուսիմյանը: Սակայն, ինչպես Հատուկ կոմիտեի, այնպես էլ Ազգային խորհրդի և Երևանի նահանգի փաստացի դեկանարն ու ողին դարձավ Արամ Մանուկյանը: Նրա ազգային-պետական մտածողության ու եռանդուն գործելակերպի շնորհիվ աշխատան - քի լծեցին ամենքը՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Արամի առաջա - դրած՝ սեփական ուժերին ապավիճելու քաղաքական գիծն ամրագրվում էր կրնկրետ ձեռնարկներով: Այս ուղղությամբ առաջին ու կարևորագույն քայլը հայկական գորք ստեղծելն էր. անհրաժեշտ էր գորահավաք հայտարարել: Արամի գլխավորությամբ ազգային մարմիններն ու գործիչները ժողովրդի շրջանում քարոզական լայն աշխատանք ծավալեցին: Արդէն 1917թ. դեկտեմբերի 21-ին հայկական առաջին գունդը ռազմաճակատ ճանապարհելու առիթով Արամը հուզիչ ելույթով դիմեց ժողովրդին՝ կոչ

<sup>15</sup> «Հայրենիք», 1964, ապրիլ, N 4, էջ 70:

անելով խտացնել հայրենիքի պաշտպանների շարքերը: 1917թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակեց նրա հեղինակած «Կոչ հայ զինվորներին» շրջաբերականը, որը բոլորից պահանջում էր կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում: Հատուկ կոմիտեի հայտարարած գորակող նպատակ ուներ հավաքագրել Երևանի նահանգի և Զանգեզուրի 20-32 տարեկան բոլոր հայ զինապարտներին: Վճռական պայքար ծավալվեց գորակողից խուսափողների, դասավորների, գենր-գինամբերք, պետական գույք հավշտակողների և հատկապես՝ Թուրքիայի կողմից ուղղորդվող կովկասյան թարարների խովուրյունների դեմ: 1918թ. առաջին եռամսյակում հնազանդեցվեցին 50-ից ավելի թարարական գյուղեր<sup>16</sup>: Զեռնարկված քայլերի շնորհիվ աստիճանաբար ձևավորվում էր հայկական զինուժը, իսկ իրադրությունը սկսում էր կայունանալ:

Արամ Մանուկյանը, որպես հայրենասեր ու հեռատես քաղաքական գործիչ, երկրորդական համարելով գաղափարախոսական տարածայնությունները, ՀՅԴ այլ գործիչների և առաջին հերթին՝ Ռուսումի հետ համախորհուրդ, փորձեց դաշնակից ձեռք բերել՝ ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի: Այդ նպատակով նա հարաբերությունների մեջ մտավ Երևանի բոլշևիկների հետ, ինչպես նաև հեռակա կարգով մասնակցեց Թիֆլիսում Ռուբենի և ՀՅԴ այլ գործիչների կողմից Անդրկովկասի բոլշևիկյան դեկավարների հետ տարփող քանակցություններին: Այդ ընթացքում ՀՅԴ գործիչների և Կովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ստ. Շահումյանի ջանքերով ընդունվեց համագործակցության զադանի ծրագիր, որի առանցքը հայ-բոլշևիկյան ճակատի ձևավորումն էր բուրքերի դեմ՝ Կովկասի խորհրդայնացման պայմանով (Արևմտահայաստանը լինելու էր անկախ):<sup>17</sup> Ու թեև այս ծրագիրը ամենայ եղավ իրականացնել՝ ողջ Անդրկովկասի մասշտարով, բայց նրա հիմնան վրա քիչ անց՝ 1918թ. հունիս-սեպտեմբերին, գործի դրվեց Թուրքիայի ցեղասպանական նպատակները կանխած՝ Հայաստանի Հանրապետության ու Բաքվի հերոսամարտի առաջնորդների քողարկված համագործակցությունը:

1918թ. մարտի 24-ին, երբ բուրքերը, զարգացնելով հունվարի վերջից սկսած հարձակումը, գրավել էին Սարիղամիշը, Երևանի բնակչությունը, զորքը և Հայոց ազգային խորհուրդը Արամին ընտրել էին Երևանի նահանգի «զինվատոր»: Պատմության մեջ սա թերևս եղակի դեաբերից էր, երբ ժողովուրդն ինքն ընտրեց դիկտատոր, որը իր անահմանափակ իշխանությունը մինչև վերջ օգտագործեց հօգուտ համազգային շահերի, և շփորձեց իրեն վեր դատել ազգային ու զինվորական կառույցներից: «Դիկտատոր» ընտրվելուց հետո Արամ Մանուկյանը հայտարարեց. «...որոք պիտի իմանաք, որ ես անոյժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է և երես ժողովուրդը պատրաստականութիւն ունի...աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի»<sup>18</sup>:

1918թ. մայիսի 15-ին բուրքական գորքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, մայիսի 20-ին՝ Երևանից 40 կմ հեռու գտնվող Արաքս կայարանը, իսկ հաջորդ օրը՝ Երևանից 30 կմ հեռու գտնվող Սարդարապատ կայարանն ու գյուղը: Առջևում Ս. Էջմիածինն ու Երևանն

<sup>16</sup> Տես ՀԱԱ, ֆ. 121, գ. 2, գ. 84, թ. 5:

<sup>17</sup> Տես Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները. հ. 7, Երևան, 1990, էջ 142-143:

<sup>18</sup> «Զանգ», Երևան, 1918, մարտի 27, Ն 24:

էին: Ամբողջ սրությամբ դրվեց հայության լինել-չլինելու խնդիրը, այնինչ հայկական գորքի զգայի նասր կազմալուծվել էր, իսկ բնակչությունը խուճապահար զաղթում էր Երևան: Պարտվողական տրամադրությունները հանգում էին նոյնիսկ Երևանից նահանջելու անհեթեթ գաղափարին:

Այդ բախտորոշ օրերին Արամ Մանուկյանը դրսւորեց թշնամուն հակահարված հասցնելու անելեր կամք ու մեծագույն եռանդ: Ս. Աֆանասյանի դիպուկ ձևակերպմամբ՝ «Արամը, ինչպես Վարդանը Ավարայրում, ի հայտ բերեց այդ հիշարժան հերոսապատմանը վայել քաջություն»<sup>19</sup>: Դեռևս Ալեքսանդրապոլի անկումից առաջ Արամը կանխատեսելով, որ բուրքերը չեն բավարարվելու նվաճածով, վճռականորեն արտահայտվել էր թշնամուն դիմադրություն ցույց տալու օգտին՝ նշելով. «Եթե երբեք մեր ճակատի վրա բուրքերը սկսեցին առաջխաղացումը, մենք անպայման պետք է դիմադրենք զենքով, թնդանորով, ոչ թե ստրկորեն անձնատուր ըլլանք և կոտորվինք»<sup>20</sup>:

1918թ. մայիսի 19-ի առավոտյան, երբ թշնամին նոր էր ներխուժել Արարատյան դաշտ, Երևանի շրջանում գործող հայկական երկրորդ դիվիզիայի հրամանատար, գեներալ Սովուս Սիլիկյանի հետ ունեցած հեռախոսագրություն ճակատագրական համարելով գորբերի հետագա նահանջը ու Երևանն էլ ավելի մեծ վտանգի տակ դնելը, Արամը պահանջեց նահանջի առաջն առնել և դիրքերը պահպանել: Արարատյան դաշտում թշնամուն հակահարված հասցնելու նախօրոք դրվագ խնդիրն իրագործելու համար նա խստացավ երկու օրվա ընթացքում գորավարին տրամադրել անհրաժեշտ ամեն ինչ՝ նարուկային ուժ, գեն-գինամքերը և թիկունիքի աջակցությունը<sup>21</sup>: Դրա համար Արամը իրահանգեց անհապաղ, առանց տարիքի ու դիրքի խստրության ռազմաճակատ ուղարկել բոլոր զինապարտներին: Խստագույնս արգելվեց լրել քաղաքը: Արամը, որը նախընտրում էր ամեն ինչին անձամբ հետևել, «իրու շարժական ոփի, ամեն տեղ էր՝ իրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցներում և կողևորեք իր խօսքերով ու կը ներշնչէր ամենին»<sup>22</sup>: Մայիսի 19-ի երեկոյան, երբ Ազգային խորհրդի նիստում հարց բարձրացվեց Երևանը թշնամուն հանձնելու մասին: Արամը ամենայն վճռականությամբ բացառեց նման հեռանկարը՝ նշելով. «.... ոչ մի նահանջ ոչ մի զծի վրա: Նահանջ Երևան - նից՝ կճանակել խաչ քաշել մեր ամբողջ գործունեության և մեր ապագա քաղաքական մուրազներուն վրա, բոլորդ պիտի մնաք և մեռնիք»<sup>23</sup>:

Արամ Մանուկյանի ջանքերի շնորհիվ վերջ տրվեց նաև ազգաբնակչության շրջանում տիրող խուճապին: Մայիսի 21-ի երեկոյան քաղաքային խորհրդարանի ամառային շենքի իրապարակում կայացած հանրահավաքում, որում սկզբնապես տիրում էր հուսահատության մքննորս, նա հանդես եկավ հակիրճ, բայց բոլանդակալից և ազրու եկույրով. «...Ես եկել եմ յայտնելու ձեզ, որ թշնամին գրաւել է Սարդարաբաղը և շարժում է դէպի Էջմիածին: Սեղ մնում է մի բան, կամ գենք վերցնել ու դրս զայ թշնամու առաջ և կամ կոտորել ոչխարի պես... Ով ուզում է ապրել, առանց բոպէ կորցնելու, բող վերցնի գենքը,

<sup>19</sup> Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղբանակը (Դայաստան. Մայիս 1918). Երևան, 1991, էջ 41:

<sup>20</sup> «Դրոշակ», Փարիզ, 1928, մայիս, N 5, էջ 137:

<sup>21</sup> Տես «ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, հունվարի 30: Վակերագրեր հայ եկեղեցու պատմության, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Յանրապետության տարիներին (1918-1920թթ.) (կազմ. Ս. Բեհրության). գ. Ե, Երևան, 1999, էջ 62:

<sup>22</sup> «ճակատամարտ», 1921, հունվարի 30: Վակերագրեր հայ եկեղեցու պատմության. գ. Ե, էջ 63:

<sup>23</sup> Տես նոյն տեղում:

վերցնի նաև երեք օրւայ պաշար ու խսկոյն և եթ դիմէ ուսուցչական սեմինարիայի շենքը՝ ցուցակագրուելու և այնտեղից էլ ճակատ ուղարկելու համար: Ես իմ ասելիքս վերջացրի, այժմ ձեզ է մնում անելիքը»<sup>24</sup>: Սարդարապատի հերոսամարտի մասնակից Մ. Մանափրյանը տարիներ անց՝ 1968 թվականին, խոսելով այս հանրահավաքի մասին, վերիիշում էր, որ Ա. Մանուկյանը, գրող Դ. Դեմիրճյանը և այլ ոգեշնչում էին ժողովրդին, կոչ անում անկախ տարիքից, սոցիալական դիրքից, քաղաքական համոզումներից գենք ստանալ ու մեկնել ճակատ: Ժողովորդն էլ, արձագանքելով իրեն ուղղված հորդորներին, քացականչում էր, բե ավելի լավ է ճակատում գոհվել, քան սեփական օջախներում մորթուսվել<sup>25</sup>:

1918թ. մայիսի 22-ին, գորավար Սիլիլյանի և փոխգնդապետ Ա. Վերիլյանի մշակած պլանի համաձայն, հայկական գորքը Սարդարապատի ճակատում հակահարձակման անցավ բուրքական գերակշիռ ուժերի դեմ և ծանր մարտերից հետո թշնամուն դրսու շարտեց Արարատյան դաշտից<sup>26</sup>: Պարտված թշնամին հարկադրված նահանջեց Ակերսանդրապոլի ուղղությամբ: Քիչ անց հայկական գորքերը՝ Դրոյի գլխավորությամբ, բուրքերին պարսության մատնեցին նաև Բաշ-Ապարանի ճակատում: Արամ Մանուկյանի կողմից Դիլիջանում կոտսակված Հայկական կորպուսի հիմնական ուժերի հրանանատարությանն ուղարկված հեռագիրը կարևոր դեր խաղաց այստեղ իշխող պարտվողական տրամադրությունների վիտիխության, հայկական գորքի՝ Կարարի հիմքա վերադառնալու և հերոսական ճակատամարտ տալու գործում:

Մայիսյան հերոսամարտերը, որոնց կազմակերպման գործում Արամ Մանուկյանն ունեցավ առաջնակարգ դերակատարություն, փրկելով հայ ժողովրդին վերջնական բնաջնջությունը, հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը:

Սարդարապատի ճակատամարտից հետո Արամը, ստանձնելով անկախ Հայաստանի նախակառավարության դեր կատարող՝ Երևանի Ազգային խորհրդի Վարչության նախագահի և զինվորական վարիչի այշտունները, ընդիմանուր գործին շաղկապելով քանիմաց և հասարակության մեջ մեծ հեղինակություն վայելող ուժերին, կարողացավ նորանկախ երկիրը պահել համեմատական կայունության մեջ, մինչև որ Հ. Քաջազնունու գլխավորած ՀՀ առաջին կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվեց Երևան:

ՀՀ կառավարության մեջ Արամ Մանուկյանին վստահվեցին միաժամանակ՝ ներքին գործերի, լրասավորության, հաղորդակցության, պարենավորման ու խնամատարության նախարարությունները, ինչպես նաև տեղական իշխանության խնդիրները: Նոր պաշտոնում ու նոր պայմաններում նորա ազգային-պետական մտածողությունն ու գործելակերպը ձեռք բերեցին նոր շունչ ու որակ:

Արամ Մանուկյանը նպատակային և արդյունավետ գործունեություն ծավալեց երկուում իրավակարգի ու ամուր իշխանության հաստատման, վարչական մարմինների, հատկապես՝ ՆԳ նախարարության ամրապնդման, պարենային ճգնաժամի մեղմաց-

<sup>24</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 6, N 178:

<sup>25</sup> Տես Մանափրյան Մ., Դիլիջանություններ Սարդարապատի հերոսամարտից. տես ՀՀ պատմության պետական թանգարան, նոր պատության բաժնի վավերագրերի ֆոնո, բաժնի մատյան 960, մայր մատյան 12441, թ. 6:

<sup>26</sup> Տես ԿԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5; գ. 82, թ. 5: Աֆանասյան Մ., նշվ. աշխ., էջ 44; Ավետիսյան Յ., Հայոց ազգային միաժամանական հարթակը. 1918 թվականի մայիս. Երևան, 1998, էջ 95-96:

ման, հարյուր հազարավոր փախստականների և որբերի խնամքի և այլ բնագավառներում:

Արամ Մանուկյանին, որպես ժողովրդին նվիրված պետական գործչի, բայց միաժամանակ՝ հեղափոխականի, բնորոշ հատկանիշներից էր նաև այն իրողությունը, որ նա, ելնելով ընդհանուր գործի շահերից, երբեմն անտեսում էր անգամ գործող կարգը: Այսպես, ելնելով բազմահազար որբերի պատսպարման, հետևաբար նրանց անխոսափելի գրկանքներից և կործանումից փրկելու նպատակից, Արամն արդարացնում է Երևանի դպրոցներից մեկը նրանց տրամադրելու մասին Ռուբենի «ապօրինի» արարքը և դրանով իսկ հավանություն տալիս վերջինիս այն մտքին, թե «ողջ և ապահով երեխանների ուսման հարցը աւելի կարևոր չէ, քան փողոցներում թափուածների ու քաղցի ճիրաններում զալարուղմների կեանքը»<sup>27</sup>: Նա իրավացիորեն գտնում էր, որ «կան դեպքեր...երբ օրենքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցատրենք կը դառնանք, մանաւանդ այնպիսի ծանր ու անբնական ժամանակներում, երբ դեպքերը տեղի են ունենում զահավէծ արագութեամբ և ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չեր կարող նախատեսել»<sup>28</sup>:

Ամենքի հանդեպ Արամի ցուցաբերած հավասար մոտեցումը՝ անկախ կուսակցական հանգամանքից, պետական և սոցիալական դիրքից, համեստ կենցաղը, անշահմանությունն ու անկաշառությունը, և անսահման հայրենասիրությունը դարձան իր և իշխանությունների հանդեպ ժողովրդական վատահության ամրապնդման գրավականները:

Դժբախտաբար, Արամ Մանուկյանին վիճակված չեր երկար ապրել և շարունակել իր հայրենանվեր գործունեությունը: Ժողովրդի հետ ամենօրյա շփումների մեջ գտնվող նվիրյալ պետական գործիչը 1918թ. դեկտեմբերին վարակվեց համբապետությունում մոլեգնող քծավոր տիֆով և 1919թ. հունվարի 29-ին կնքեց իր մահկանացուն: Հանդես գալով ՀՅԴ-Արևելյան Բյուրոյի անունից, Արամի հետ հրաժեշտի պահին Ն. Աղբայլանը նշեց. «...մենք այս օր այսին թաղենք մեծ մարդը, զոր հայ ժողովորդը տուած է մեծ պատերազմի նըրացքին: Ի՞նչ է մեծ մարդը. Մեծ մարդը ան է, որ զիտէ ըմբռնել ժամանակի հարցը և որո՞նք էին այս վերջին շրջանի մեծ հարցերը, որ համայն հայ ժողովրդին կը պատկան՝ էին հայ ժողովրդի պաշտպանութեան և ազատութեան հարցերն էին ասոնք ...Վանը բոլորի յիշողութեան մէջն է, ինն Արամը հանդիսացաւ հայու հերոսական ոգին, փրկելով անոր ուազմական պատիվը: Երևանը վկայ էր այն հզոր ուժին, որ կար և կապրեր անոր մեջ, որ կազմակերպեց դիմադրութեան ուժը և այդ դիմադրութեան շնորհի կարողացաւ իմբք նմել Հայաստանի Համբապետութեան, հայ ժողովրդի ազատագրութեան»<sup>29</sup>: Ուստի Ն. Աղբայլանը Արամի հետ հրաժեշտի համար հավաքված բազմությանը հորդորում էր. «Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենեակը և խօսեցէք ձեր խղճի հետ և ըստք, արդեօք աշխատե՞ր էր հայ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղե՞՞ր էր այնքան անձնազոհ, որքան Արամը, տու՞՞ր էր ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը...»<sup>30</sup>:

<sup>27</sup> «Արամը», Մահուան յիմանեակին առքիւ, Երևան, 1991, էջ 139:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 140:

<sup>29</sup> «Աշխատանք», Երևան, 1919, փետրվարի 12, N 4; Վրացեան Ս., Կեանքի ուղիմերով: Դեպքեր: Ապրումներ, հ. Ե, Պէյրուը, 1966, էջ 54-55:

<sup>30</sup> «Աշխատանք», 1919, փետրվարի 12, N 4; Վրացեան Ս., Կեանքի ուղիմերով, հ. Ե, էջ 54-55:

Արամ Մանուկյանի կյանքը ամբողջական նվիրում էր հայ ժողովրդին, նրա ազատության և անկախ պետականության վերականգնման համար մղվող պայքարին: Ամենուր, որտեղ որ գործել է Արամ Մանուկյանը, աչքի է ընկել քաղաքական հասունությամբ ու հետախույսությամբ, կազմակերպչական բացառիկ ձիրքով, անշահախնդիր վարքով, անկուտրում կամքով, իրատեսությամբ և մեծագույն պատասխանատվությամբ իր ժողովրդի ճակատագրի հանդեպ:

## Summary

---

### ARAM MANUKYAN: on the occasion of the 130th anniversary of his birth and 90th anniversary of his death

*Armen S. Asryan*

It is impossible to imagine the re-establishment of the independent statehood of the Armenians, the formation of the first Republic of Armenia without remembering and appraising the life and work of Aram Manukyan (1879-1919).

Aram Manukyan was devoted to the Armenian people, to the struggle for the re-establishment of its independent statehood and freedom. Aram Manukyan's every act appeared to be politically mellow and prudent; he had a gift for organizing, an unselfish behavior, unbending will, optimism and a sense of responsibility towards the destiny of his nation.

Since his membership to the Armenian Revolutionary Federation in the 1890s, Aram Manukyan fought for the freedom of Armenians till the end of his life. He believed that Armenians, who had raised the flag of liberation against the yolk of Turkish oppression, must rely on their own power.

During the First World War, Aram tried to protect the Armenians of Van from Turkish brutality. In April, 1915, by collaborating with other political forces, Aram organized the self-defense of Van. As a result, Van was saved from the massacres, which befell 1.5 million Armenians from other regions of Western Armenia.

The ideological, practical and consistent steps taken by Aram in 1918; his decisive orientation in the fatal days of May when the battle had turned in the Turks' favor; his defense of Yerevan that brought a nation and its forces in despair to its senses from the horrific danger of a Turkish attack, not only guaranteed the existence of the Armenians nation but re-established an independent Armenian statehood.

We are obliged to Aram Manukyan for establishing the Republic of Armenia and it isn't fortuitous that only he has been honored with the title of founder of the Republic.